ԿԻԼԻԿԻԱ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԶՐԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՀԱԿԵՐՏ ՀԱՐՑՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ

ԹԻՒ 12. ԴԵԿՏԵՄԲԵՐ 1.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ԳԱԼԱԹԻԱ, Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ ՓՈՂՈՑ ԹԻՒ 17.

ԱՐԱՐԻՉ

ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ, ԱՒՕԳՈՒՏԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Ա· ՏԱՐԻ· ԹԻՒ 12· 1861 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1·

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱՑ

Իւրաքանչիւր տեղի մէջ, մանաւանդ ասոր վերջին ժամանակներս թերեւս չգտնուիր հայ մը որ երբեմն իւր անձնական զբաղմանց հոլիսնեն դուրս ելնելով ազգային իրաց վերայ չխորհի, և անոր բարգաւաճումեան և յառաջադիմութեան միջոցներ չմտածէ, այնպիսի միջոցներ զորս ոչ թէ իւր տաքցած եռեւռայուԹիւնը կմեղադրէ, այլ ուղիղ բանը և հասարակաց փորձառութիւնը։

Ազգասիրաց այս չանքն ու փափաքը անուրանալի են, բայց զարմանալի բան. որ յառաջ եկած արդիւնքը անոնց չանքին և փափաքանացը դէռ չպատասխաներ, եթէ արդիւնք ըսելով, Ազգին թէ նիւթական և թէ բարոյական վիճակին բարելաւութիւնը հասկնալ պէտք է նէ։

Կէս դարէն աւելի է որ ճշմարտութիւն մը գտած. ըսել կուզեմ ընկերութեանց օգուտը, ճշմարտութիւն մը, որ եթէ լինչ եռանդով ոգւոնեցինք, նոյն եռանդիս գործեինք նէ, այսօր մեր Ազգին վիճակին մէջ շատ ազդիկ զգալի տարբերութիւններ պիտի գտնէինք։ Այո, այժմ մեր մէջ ընկերութիւնները չեն պակսիր. կրնամ ըսել թէ չկայ թաղ մը որ իւր մէջ ընկերութիւն մը չունենայ, և թերեւս կայ օր մը որ նոր ընկերութիւն մը լոյս ընծայեսնէ, բայց մինթէ ընկերութիւնները

լակ լրագիրներ կարդալը համար ոչ-նչ է ըլլան, կամ թէ պանդուխ լակ իրենց անուանքը նկատ է ճանչնալ. ոմք են արուեստական, առևտրական ընկերութիւնները, ոմք են ժողովրդական դրամատուները, ոմք են նաւարկութեան ընկերութիւնները, որոնց բոլորը այսօր օտար ազգաց մէջ, մարդկային մտաց և հանճարոյն գիւտերն ու հնարքները ծուռ ելլով, քաջալերելով, քաղաքները գործարաններով, երկաթուղիներով և ջրանցքներով, ու ծովերը նաւերով կլեցընեն, և ժողովրդոց հարստութիւնն ահեղնելով, առատութիւն և դիւրակեցութիւն կը պարգեւեն անոնց առհասարակ: Ոմքեր ասոնք ոչ թէ գերբնական կամ դիւթական զօրութեամբ մը կընեն, այլ մեզ նման անհատներու միութեամբը ըսել կուզեմ իրենց մտացը, ընչացը և ձեռաց գործակցութեամբը:

Լակ մեր ընկերութիւնները այս երջանիկ տահմաններէն շատ հեռու գըտնուելով, յատկանշական դատապարտուելոց նման ատակաւին իրենց նպատակին չըհասան, քանիներ արդեօք դէռ լսող հազիւ սեռած խաւարեցան, քանիներ ասպարէզին մէջ սեղը կտակեցան. և քանիներ իրենց նպատակէն չերջացան, որով շատերուն ալ վհատութեան և անվստահութեան օրինակներ տուին:

Ազգային ընկերութեանց այս անչափաջողութեան պատճառները բազմատեսակ են: Շատ անգամ կպատահի որ ընկերութեան մը հիմնադրոց նախնական ջերմ եռանդին սակաւ առ սակաւ պաղութիւն մը կչափջրգէ, ասի Թերեւս մեր ամենուն բնական մեկ ախտն է, զի ձեռնարկութիւն մը ըրած առենիս, առաջ անոր ունեցած կրակն արժէքին փոխանակ երեւակայական արժէք մը կդնենք մեր մտքին մէջ, և երբ փորձը մեր սխալը յայտնէ, խակին կը քանիմք, կթուլնանք: Այսպէս ընկերներէն ոմանք ակամայ և ոմանք ակնածութեան համար բաժնորդ կըլլան, կը տանեն այնպիսիք ալ որոնց բերած բաժինը լակ համապատասխանութիւն և ինքնատրութիւն է. և հաղիւ երանի այն ընկերութեան եթէ չդնուին իրեն մէջ ամեն բարեկարգութեան թշնամի այն կարգ մը մարդոցմէ, որոնք առանկ ընկերութեան նոյն իսկ առհմանագրութիւնները առարկած վայրկենէն իրենց սրտին մէջ դատապարտ կըլլան զանի քնացինչ ընելու:

Ընկերութեանց հոգին ազգութիւն առհմանագրութեանց անհերի գործադրութիւն և միութիւն է, երբ ասոնք պակսին, ընկերութիւնը մեռած է, և չերեսի մեր ազգին էն փոքրիկ ընկերութիւնէն մինչև այն մեծ ընկերութիւն (զոր երեկ չէ առկի օր հատատեցինք և այսօր գերեզմանին վրայ կերերայ,) եթէ գիտեմք անանց ծնունդ դէն սկսելով մինչեւ վախճանը, բոլոր այս ըսածներս յայտնի կհատատուին:

Կարճ խօսքով ըսեմ, չիսուն տարիէն աւելի է որ Ազգը ընկերութիւն ընկերութիւն կգոչէ, բայց ատկաւին չատերնիս իսկատ չատերնիս չեմք գիտեր թէ ինչ են ընկերութեան մը պայմանները, և ընկերութեամբ ինչ օգտակար ձեռնարկութիւններ չկրնար գործել ժողովուրդը: Ընկերութիւնները ամենազօրաւոր միջոցներ են արհեստից և ճարտարութեանց ձեռքով Ազգ մը հարստացնելու, նորոգելու և վերսին ծնանելու, ասի փորձով հատատուած ճշմարտութիւն մըն է, և եթէ ուրիշ ազգերը տակից օգուտ մը կրցած են քաղել նէ,, մեր Ազգը ինչո՞ւ չսիսի կրնայ քաղել. մանաւանդ ընկերութիւնները եթէ խելացի կերպով կարգադրուին, այս ինքն թէ մտանատուրց չահը տեսնուին չահին մէջ յատահովի ըլլան, այն տեսն զօրաւոր դեղմամի մը կրնան ըլլալ եռութեան՝ որ մեր մէջը բարձր իգլուխ կպտնծայ:

Հաւատքին և անձնապատանութեան ամեն տեսակ մեր սրտին մէջտեղը վերքերը եղած են։ Մարդ ժողովքի մը մէջ և իսկոյն կնշմարես որ շատ քրիստոնեական նպատակը ընկերութեան օգուտն է, մեծապէս մտածել միայն փայլել, միայն իւր կարծիքը պաշտպանել և յաղթական նակել կմտադրեն, եթէ յարմարագոյն տեղ կրցան ընել լաւ, ապա թէ ոչ, պատրաստ են ատրճիւայ միջոցներուս դիմելու, և մինչև անգամ ընկերութիւնը կործանելով անոր աւերակաց վրայ իրենց կարծիքը բարձրացնելու, ասանկով արդեօք քանի՞ ընկերութիւններ մէկ լոկ կարծիքի մը, շատ անգամ չնչին կարծիքի մը համար բնաջինջ եղան։

Մարդոց իւր կարծիքը պաշտպանելը բնական բան մ՚է, և ամեն մարդ ալ որ ըլլայ ունի իրաւունք իրեն արգար իրաւացի և օգտակար կարծածը պաշտպանել եթէ հարկ ըլլայ բոլոր աշխարհի առջեւ. ասի առաքինութեան գործ է, բայց երբ դիմացինն ալ զօրաւոր և ատոր փաստերով իւր ըսածին հակառակը կհաստատէ, երբ իրեն սխալական կարծածը կ յայտնէ թէ սեւ է, այն ատեն փոխանակ այլ եւս յամառելու, ամաչելու, պէտք է թուզը իւր փառաց և ճշմարտութեան հնազանդի թէև ամենաուստաց բերան մը զանկ հաստատած ըլլայ. այս է անկեղծ մարդու մը ընելիքը երբ իւր նպատակը լոկ ընդհանուրին օգուտն ըլլայ, և ոչ թէ իւր անարդ կիրքերը ուրոյց միշտ սիրելի է ճշմարտութեան և առաքինութեան քօղով ծածկել ամենէն կոշտ սխալները և ամենէն վատթար մոլութիւնները։

Բայց մեր ընկերութեանց մէջ ատոր հակառակը կտեսնուի, ամանք կոյր հաւատքով, և ամանք ալ ճշմարտութեան ծանօթ ըլլալով զանկ իրենց անձնասիրութիւնը անդիմաբար կսպանեն, երբ ընկերութեան կամ ժողովուրդին օգուտը կպահանջէ, որ հոն ուր ընդհանուրին բաղդը պիտի որոշուի, լաւն բոլոր անձնական կիրքերը և թելադրութիւնները, և միայն ընդհանուրին ձայնը իսօսի որ անհատ մը շատ աղէկ իւր օգուտը կճանաչէ։

Ահա անոնք են այն թերութիւնները որ կնշմարեմք մեր ակումբներուն մեր ընկերութեանց և Աղբին մէջ, ա նանկ թերութիւններ որ դարերէ ի վեր երբեք անիծեալ ժառանգութիւն մը սերունդէ սերունդ կքնալով ցաւոց և արտասուաց ձոր մը բացած է մեր Աղբին մէջ։ Ընդհանրապէս կկարծուի թէ հասարակաց գործակցութեան մէջ ժողովուրդ մը աւելի սերտիւ իւր միջը կմիանայ, իսկ մենք որ ամենէն աւելի միութեան պէտք ունինք, և ամենէն աւելի բաղդին հովերուն խաղալիկ եղած ենք, դեռևս թայլ և հեղք կմնամք. և մեր հայրենեաց տխուր աւերակաց և կոտրատած թագերուն քով փոխանակ սիրոյ և եղբայրութեան գաղափարներ հաստատելու, փոխանակ մեծ ու փոքր, ախոյեան և զօրաւոր մէկ սիրով մէկ զգածմունքի լեցուելու, ատելութիւն և նենգ կանուշանեմք մեր սրտերուն մէջ և կ յարգնիմք եղբայր եղբօր դէմ պինելու . . . . . :

Արթնանանք եղբարք, արթնանանք այն քունէն, այն թմրութենէն որ մահու կարապետ է, գիտնամք որ ինեւտասանութեան դարը, յորում կապրիմք, յառաջդիմութեան դար է, և որուն մէջ ետ կեցողը աղբաց հանդիսին մէջ աւելի չանի։ Ընկերութեամբ վանենք մեր սրտերէն բոլոր վատ կիրքերը, և ատելութիւնները և տատելութիւնները և լոկ հայրենեաց սիրոյն զանկ ընդունելութեան ընենք։ Երթիք է որ ատանկ զգացում մը տհասարակ մեր ամենուն սրտին մէջ լինայ, ձեռք ձեռքի տանք, միանամք, մոռանամք մեր անձնական գոյութիւնը և զանկ Աղբին գոյութիւնը մէջ միայն դնամք. և ահա այն ատեն հինաւուրց Հայաստանին եղե-

բաման ձայները լսելով, բերկրութեան և հրճուանաց նուագները անոր այրիացեալ լեռներուն, ձորերուն և դաշտերուն մէջ արձագանք պիտի տան, և այն քաղաքները որ այժմ աւերակաց կոյտ և գազանաց որջ եղած են, իւր բնակչաց ուրախութեան ձայներով պիտի հրճուին. ղեկ զայն որ մարդիկ աւերեցին՝ մարդիկ կարող են վերականգնել:

Ազգի յեղափոխութիւն մը ընելու համար պէտք չէ յուսահատիլ մեր ներկայ վիճակին: Մեր միութեան առաջնորդները որչափ մեծ և անյաղթելի ըլլան, տակաւին կ՚յաղթուին երբ մը տածեմք թէ մեր ամենքս ալ միայ հօր ծնունդ ենք, մեկ հայրենիք ունիմք և մեկ ճակատագիրը հաւատարապես մեր ամենուն վրայ կհեծէ:

Հետամնիք համակամաքար, յարատեւ ընկերութիւններ հաստատեմք, վարժարաններ յաճախեմք, բարեկարգեմք, մեր տղայքը, մեր աղջիկները կրթնից, հայրենեաց և քաղաքակրթութեան սիրոյն մէջ կրթեմք, պատժենք անոնց իրենց մտաց հասակին մէջ թէ եսութիւնը և անմիութիւնը ինչ տգեղ վիճակի մէջ դրին մեր հայրենի գաւառը, ցուցնեմք անոնց թէ կոյր ոգիութիւնը ինչպես ապականեց այն սրտերը և ինչպես նուաստացուց այն հոգիները որ երբեմն աղատութեան մէջ կշնչէին: Վերջապես ցուցանեմք անոնց այն երջանիկ աղդերը որ հետ ղհետէ իրենց գիտութեանց կոպարը ընդարձակելով, իրենց համբաւն ու պարծանքը երկրագնիս ամեն կողմը հռչակեցին, և հնարից ու ճարտարութեանց հայր ըլլալով հարստութիւնն ալ կրկնապատկեցին, և առաւութիւնն ու դիւրակեցութիւնը առ հասարակ սփռելով, իրենց և իրենց սերնդոց կեանքը դիւրացուցին և բազմապատկեցին:

Երբ այս դասերը անոնց մտացը մէջ այսպէս կանուխ հաստատեմք, երբ իրենց հարցը սիրայեղորէն զանոնք փոքր ձառս ընեմք, և երբ սրտերնին ամեն վեհ, ամեն ազնիւ զգացումներով մշակեմք ալ հոն տեղ չեն ունենար մըտնելու բոլոր անարդ և այդպիսի կիրքերը, և պատրաստ կըլլան ընդունելու առանց նախապաշարմանց, ճշմարտութիւնը որ բերանն որ քարոզէ, ալ մեր ժողովքներն, ընկերութիւնները աւելի կատարեալ, հաստատ և յարատեւ հետեւապէս աւելի օգտակար կըլլան, և ալ չենք լսեր այն ձայները որ ընկերութեան մը ծնունդը աւետելէն եռքը անոր մահը կգուժեն:

Ցեմք կրնար այս խորհրդածութիւնը վերջացնել առանց մանաւանդ ըսելու այն չնորհակալութեան որ Ազգը կպարտաւորի թէ Պեշիկթաշլեան Ընկերութեան և թէ Ընձեռնակուեր պատանեաց Ընկերութեան որոնց առաջինը Վարժարանաց կանոնաւոր դասագիրքը պատրաստելու գովելի ջանքն իրեն նպատակ դրած է, և երկրորդը Հայաստանի մեր պանդուխտ եղբարցը հայրենի լեզուն ձրիաբար ուսուցնելու անձնուէր եղած է. որոնց յարատեւութիւն և լիուլի յաջողութիւն ցանկալով, կմաղթեմք որ իրենց հետեւողաց թիւը բազմանայ վասն օգտի և փառաց հայրենեաց:

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

1. Կենաց երջանկութեան համար չորս բան պէտք է, առողջութիւն, մտաց հանդարտութիւն, հարստութիւն, և հաւատարիմ բարեկամ:

2. Մարմնոյ հիւանդութիւնները բժշկելու համար ամենէն ազդու դեղերն են համբերութիւն և մտքի խաղաղութիւն:

3. Ինքնիրմէ գոհ չըլլալը ակարութիւն է, աւելի գոհ ըլլալն ալ անխելքութիւն է:

4· Շատ մարդոց ընկերութիւնը տեսակ մը վաճառականութեան կնմանի, որուն տեսողութիւնը պիտանաւորութեան հետ կվերջանայ։

5· Մարդուս կեանքին մէջ պատահած նեղութեանց ամենագէշն է տալ որուն ամենեւին իրաւունքը օգուտ մի չընէր։

6· Յոյսը որչափ որ խաբեբայ ըլլայ միշտ զուարճալի է։

7· Խարիսութեան ամենայարմար դեղը համբերութիւնն է։

9· Ուշ կամ կանուխ ճշմարտութիւնը յայտնի կըլլայ։

10· Փնտռէ միշտ աղէկութիւն ընել, բայց պատրաստ եղիր չարութիւն ընդունելու։

12· Յաճախէ աղէկ և բարի համբաւ ունեցող մարդոց հետ նոյնն ըլլալու համար։

12· Ուրախութեան ընելիքդ վաղուան մի՛ ձգեր։

13· Ով որ ինքզինքը չսիրէր, չսիրուիր և ոչ մէկէ։

14· Ոչին որ քու արուեստդ է, ընդհանրապէս թշնամի է քեզ։

15· Ճշմարտութիւնը, արդարութիւնը և իրաւունքը կկործանին իր դրութիւնը երբար զուարճալի կերպով չեն միացած։

17· Ինչ որ ընես միշտ մտածելով ըրէ, դի վերջը դէշ ալ ըլլայ, սիրտդ այնքան չվիրաւորուիր։

18· Ինչ գործի որ ձեռնամուխ ըլլաս, նայէ որ միշտ պատուաւոր կերպիս վախճանը ձեռք բերես։

18· Ընտիսի վարմունք ունեցիր, որով բոլոր աշխարհիս համարմունքը վաստկիս։

19· Դատախարակութիւն ունեցողներն, իրենց ամենաթշուառ օրերուն մէջ մխիթարութիւն կրնան գտնել։

20· Ճարուտք և աղքատք կրթութիւն ունեցիք և սիրեցէք ընթերցանութիւնը։

Ը. Օ. Դ

ԹԱՏՐՕՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Վերախոհութիւն մեծ է ինձ, սիրելի Հպատակս ծանուցանել այնպիսի լուր մը, որուն օգուտը և բարի հետեւութիւնները մեծ և անչափ են. այն է որ կկրթէ մարդուս կիրքերը և միշտ ի բարին կառաջնորդէ, որոնք կիրքս կընէ, պատգամաւորութիւնները կխափիսկընէ, բարոյականը կկրթէ. իրաւ է որ այսպիսի ազգօգուտ ձեռնարկութիւն մը մեր մէջն ալ ժամանակ ժամանակ երեւան եկաւ, բայց դժբաղդաբար աշխատողաց արդիւնքը և փափաքը լիուլի չգոհացուեցաւ և հետեւաբար ազգայնոց այս մասին համար ունեցած սէրերնին կրկին մարեցաւ. բայց շատերուն Թատրօնի վերայ ունեցած վաեմ գաղափարը շարունակ զիրենք թելադրելով և զգալով անոր անհրաժեշտ պիտանաւորութիւնը, մտածանք մեր նման ազգի մը հասարակութեան վերջապէս աշխատեցան և ամեն ջանք ի գործ դնելով յաջողեցան, որուն պատուն է ահա Ներսէս մէջ հիասակ ճամբան Արեւելեան անուն Թատրօնը, ուր կյուսամ թէ ամեն սիրելի ընթերցողք պատիւ ունեցան մինչեւ այսօր գոնէ մէկ կամ մէկ քանի անգամ ներկայ գտնուիլ յանձկայեալ դիմերնին։ Ասոնց ամենեւին չեմ շողոքորթեր ըսելով թէ այս նորահաստատ Թատրօնը ունի Թատրօնի մը վերաբերեալ այն ամեն կատարելութիւնները, ախ, ասի անկարելի է, բայց սա միտակ պարատաւորութիւն համարելով կյիշեմ որ օր ըստ օրէ Նորին պակասութիւնները լեցնելու միջոցներն ի գործ դնեմք և կարծեմ թէ այսպիսի գործի մը յարատեւութեան միտակ դարմանն է ազգայնոց քաջալերութիւնը, որով կարող կըլլան աշխատասիրողք ալ դանի աւելի օգտակար ընել և աւելի կատար-

եալ վիճակի մէջ բերել։ Իրաւ է որ հաս յարմար էր այս կէտին վերայ ընդարձակօրէն խօսիլ և մանաւանդ պատճառս Թատրոնի մը բնչ ըլլան և միանգամայն անոր ծառայութիւնները ըստ մեր կարի ձառնել, բայց այս անգամ այս մեկ քանի տողերը բաւական համարելով, միայն Նորին Ազնիւադիրայ մեր Ընտիհակալութիւնը խորին յարգանօք մատուցանելով և միշտ բարեմաղթու լինելով Նորին պատուաւոր կերպիւ յարաբերութեանը կվերջացնեմ խօսքս, խոստանալով մեր յառաջիկայ Թերթին մէջ Թատրոնի վերնագրով յատուածի մէջ յատկապես խօսիլ։

ՆԵԿՏԱՐԻՆԵ

ԿՈՑՍ ՆԱՀԱՏԱԿ

Ազնուափայլեայ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԻՄԵՈՆ ԱԼԱՃԱՃԵԱՆ

ԴԱՍԱՏՈՒ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Պեղեցիկ և ընտիր գերթուած մի է. ուր յարգոյ Հեղինակին Հայկաբանութեան մէջ ունեցած մանաւանդ Թիւնը և Հանճարը աչերու կառնուի կյուսամք որ այս իր առաջին աշխատասիրութիւնը ընդերցասէր Ազգայիններէ պատկուելով, ուրիշ աւելի ընտիր և աւելի օգտակար գործոց կձեռնարկէ, չվհատելով ուրիշ մեծարգոյ Հեղինակաց նման, որոնք շատ անգամ յաւելի է ըսել քան ծախքերնին անգամ հանելու բաղդը ունեցած չեն, որով այնպիսի գործերու հրատարակութիւներ օրէ օր վտանգի աւելնալու, նուազելու վերայ են դժբաղդաբար։

Կգտնուի Կ. Պոլիս Ներճանը միևնոյ գրավաճառ Պ. Պաղտասարին քով, և Պէյ-ղլու Սուրբ Աշխարհաբեր եկեղեցւոյ մօմատեղին (բանկալը)։

Մեծարգոյ Խմբագիր.

Կաղաչեմ բարեհաճիք Ձեր պատուական Հանդիսին մէջ տեղւ մի շնորհել նամակիս, և անոր նպատակին վերայ պէտք եղած ծանօթութիւնը տալերնիդ կխնդրեմ։

«Եթէ ամեն անհատ պարտաւորեալ է իր ձեռքին եկածը Ազգին բարեբեռանը համար ընել. եթէ ճշմարիտ է այս խօսքը, որուն վերայ երբեք չեմ տարակուսիր, վասն զի ոչ թէ միայն ամեն օր օրինակները կտեսնեմք Ազգային, նպատակս և օտար պատմութիւնները զմեզ ամենայն կերպիւ կը համոզեն, միևն իր հարստութեամբը միւսը խրատովը, որ մեկն ալ բարի օրինակ հանդիսանալովը. մեկ խօսքով մարդս երբեք կատարեալը արարածոց մէջ բնական է օգնել ընկերին և մեծ պարտաւորութիւն մի ունի սիրել զընկերս, ուստի նուաստութիւնս ալ իրեն ազգային անհատ մի, Ազգիս փոքրիկ ծառայութիւն մ' ընելու նպատակաւ համարձակեցայ այս տեսակ աշխատութեան մի ձեռնամուխ ըլլալ, ուրուն յաջողութիւնը կախում ունի մի միայն իմ հայրենասէր Ազգայնոցս ընդունելութենէն ուստի կյուսամ թէ այս առաջին օրինակը իրեն փորձ ընդունելու պիտի բարեհաճին Ազգայինք, որ նուաստիս ալ քաջալերեն մի առած պիտի լինին գործոյս շարունակութեանը, և հետևաբար մեծ պատճառ պիտի ըլլան մեր Նախնեաց սքանչելի պատկերներն իրենց մեծ և քաղցր անուան յիշատակաւը դարուց ի դարս անկորուստ մնալու,

որով

Մնամ միշտ երախտապարտ
Յ. Փափակալ Խաչատուրեան

1861 Վերիգպաշ։
Դեկտեմբեր 19։

Մեր սիրելի Բարեկամին այս առաջին անգամ երեւան հանած պատկերին է ինչպես յայտնի ամենուն,

ՑԵՂԹԱՆԱԿ ՏԻԳՐԱՆԱՅ ՈՐԴՒՈՅ ԱՐՏԱՀՒՍԻ

զոր կծախսէ Ներսէս Շնորհալի—Ճամբան Վանդէից Ծեսպանատան դէմ Թիւ 234. Շուկան Հայ գրավաճառներուն քով և Փարիզի Ազատութիւնը Խաչերեայ—խանը Թիւ 2. մէկ օրինակի գին 10 ղուրուշ գնով:

Ասոնց յարմար կսեպեմ մեծաւ ուրախութեամբ գոնէ իմ սիրուն բայց ախտաբեր Հայրենեացս նախնի փառացը արժանի եղողն մը ԱՆՈՒՆԸ յիշել և նորին վարքը համառօտ կերպիւ անցնիլ, որով անշուշտ պիտի բարեհաճին իմ աղնիւ Ազգայինք սիրով ընդունելու Բարեկամիս աշխատութեան այս առաջին օրինակը, որով մեծ քաջալերութիւն մի պիտի տան հետ գնետէ շարունակել:

“ Տիգրան Ե. մեր այս Թագաւորը Երշակաւնեաց Թագաւորութեան կվերջաբերի և կյաջորդէ Արտաշէս իւր հօրը, որն որ իւր Հայրենեաց վերայ ունեցած այնչափ խնամքին դպատ անուանի է նաև իւր սա երեւելի խօսքը “Ընաղ փառաց անցաւորի ». անուանի էր կըսեմ Արտաշէս, որովհետև նա չեղև անփոյթ իւր Ազգին քաղաքական կառավարութեանը և մանաւանդ ապագայ բարւոյն վերայ. հապա նա մտածելով ուզեց որ իւր Տիգրան որդին լաւ կրթուի. անուանի էր կըսեմ դարձեալ Արտաշէս. որովհետև նա չեղեւ այն աշխարհակալներուն պէս, որ իրենց մեռնելովը՝ տերութիւնն ալ մեռուցին, և կամ առանիկ ակարացուցին:

Տիգրան ալ նոյնպէս երևելի եղեւ իւր Հօրը նման. որ նորին հետևեալ համառօտ վարքէն ալ կհասկցուի:

Յոյները և ուրիշ հարևաւոր ազգեր լսելով Արտաշիսի մահը և իրեն քովն եղած զօրաց ցրուիլը սկսան ապստամբիլ և Հայաստանի վերայ վազել. Տիգրան որ երկու տարիէ ի վեր թագաւորած էր, միանգամայն պատերազմական բաներու վարժ ըլլալով և Հօրը պես քաջ պատերազմող, մէկէն զօրք ժողվեց և Միհրդատայ հետ մեկտեղ վրանին պատերազմի ելաւ. զանգինքը յրուեց հալածեց, և պատերնուն մէջ իր Հօրը տպաւորած վախը ժամանակ չթողուց որ հանեն, հապա աւելի հաստատեց:

Ընկնկց գառնալու առեն հանդիպելով սիրեց բոլոր Փոքր—Ասիոյ, և բոլոր այն կողմերը Միհրդատայ յանձնեց ու Պոնտոսի թագաւոր անուանեց զինքը, որպէս զի ուրիշ անգամ չկարենան ապստամբել: Այլ և այլ պատերազմ ներսէ ուրիշ շատ տգերուս տիրեց, և ամեն պատերազմներու մէջ քաջութեամբ յաղթող գտնուեցաւ. իր անունէն գրեթէ բոլոր աշխարհք կթագաւոր, անանկ որ շատ օտարազգի պատմիչներ կարծեցին թէ Հայոց Թագաւորութիւնը Տիգրանէն սկսած, ու Տիգրանով ջնջեր է:

Հռովմայեցւոց պատմիչներէն շատը կըսեն թէ խել մը դերի թագաւորներ կծառայէին իրեն, որոնց մէկէն չորսը միշտ քովն էին, և երբոր ձիով տեղ մը երթար, անոնք իրենց թագաւորական զգեստովը ոտքով կերթային բոլորտիքը պատելով. նոյնպէս նաև ամեն դատաստանական և քաղաքական հանդէսներու մէջ դիմացը ոտքի վերայ կկենային:

Տիգրան այս պատերազմներէս վերջը Հայաստան դառնալով մեհեանները շինեց և Յունաստանէն բերած Արամազդայ, Աթենասայ, Արեամեայ, Ափրոդիտեայ և Հերակլեսի արձանները այլ և այլ քաղաքներ դրաւ, նախապարծանքներուն ալ խստիւ պատուիրեց որ կուռքերուն աղէկ պատիւ տան. և

որովհետև Խաբբոտունք առջև բերան յանձն չառին կռապաշտութեան բանները, անոր համար Պուռպ անունով նախարարին լեզուն կտրել տուաւ, աստուածները նախատելուն համար. ասով մեացածները յանձն առին զոհ եալ խոզն միս ուտել:

Ես միջոցներուս գրգռուեցան ան սոսկալի ու երկարատև պատերազմները որ Մհերդատ ու Տիգրան ըրին Հռովմայեցւոց դէմ: Տիգրան մեծամեծ կարդեր ըրաւ Հռովմայեցւոց զօրացը վերայ, մինչեւ որ եկաւ Լուկուլլոս:

Երբոր Տիգրան Հռովմայեցւոց պատերազմներէն քիչ մը դադրեցաւ, Մեւլեւկիացւոց Թագաւորութեան մէջ խռովութիւն կնայելով իշխաններէն ուզեցին որ Տիգրանայ յանձնեն իրենց Թագաւորութիւնը:

Տիգրան Մեւլեւկիացւոց տիրելէն վերջը, երբոր լսեց Սիլլայ մահը, շատ զօրքով վազեց Կապադովկիայի վերայ, և տիրեց բոլոր աշխարհքին. այս միջոցին Տիգրանայ և Մհերդատայ մէջ խռովութիւն ծագելով և Լուկուլլոս իմանալով առիկայ իրեն յարմար առիթ սեպեց և պաշարեց Տիգրանակերտը, որուն վերայ Տիգրան անթիւ զօրքով եկաւ, բայց տեսնելով Թշնամի եաց սակաւութիւնը արհամարհելով ըսաւ. "Թէ որ դեսպան են եկեր՝ շատ են, իսկ եթէ Թշնամի՝ քիչ:"

Տիգրան 54 տարի Թագաւորելէն վերջը՝ ութսունևհինգ տարեկան մեռաւ, բոլոր կեանքը պատերազմով անցընելով: Իր կենացը մէջ կտեսնուի անպարտելի արիութիւն, անխոնջ աշխատասիրութիւն, վեհանձնութիւն մը ուսոց, ինչպէս եցոյց՝ Մհերդատը Թշնամեան ձեռքը չտալուն մէջ. խոհականութիւն՝ որով գիտեր ըստ տեղւոյն և ըստ պարագային նաև Թշնամուն խնայարհիլ, ինչպէս Պոմպէոսի հետ հաշտութիւն խօսելու մէջ, և Շէզին նախագահութիւնը տալու տեն. կրօնից սէր, և ուրիշ գովելի հատուածութիւններ:

Տիգրանայ ըրած սխալմունքներն ուսոնք էին՝ որ երբեմն չափէն աւելի իր վրան վստահանալով պատշաճ զգուշութիւնները չընաւ. և քիչ մը տեն իր մեծ փառքովը շլացաւ: Եթէ Տիգրան կենացը մէջ Թշնամութիւն մը ունեցաւ՝ իրեն արժանաւոր չափորդ չունենալն է: Թէ որ չափորդը վերցաւ իրեն քաջութեամբը կենդանի պահել Տիգրանայ արդիւնքը, Ազգը իրեն և բախտագիտութեամբը պարտական է կենդանացընել իր անմահ արդիւնքները:

Աստի կյուսամ Թէ սիրելի Ազգայինք ամենայն ուշադրութեամբ կարդալով այս վեհանձն Թագաւորին հմառօտ վարքը և Աղին մերթերուն երբեմն փառաւոր, բայց այժմ տխուր չարեներաց համար տուած անխոնջ աշխատութեանցը դէմ, կարծեմ շատ քիչ և քիչ փոխարինութիւն մի ըրած պիտի ըլլամք Ինոր և Ինոր նմաններուն միտակ պատկերները քովերնիս պահելով:

ԸՕՈՂՉԱԿԱՆ

ՓՈՂՈՑ

Ամեր մեկ քանի թերթերուն մէջ մաքրութեան և օդին զանազան յատկութեանց վերայ մանրամասնաբար խօսած ժամանակնիս խոստացած էինք յատկապէս փողոցներուն տարբեր դրութենէն մարդուս մարմնոյն կամ առողջութեանը հասուցած վնասներն ալ յայտնել։

Այս խնդրոյն մէջ ալ մեր խօսելիք առարկայից գլխաւորը օդին զանազան յատկութիւններն են. ի փողոցներուն դիրքը շատ անգամ մեր մարմնոյն կրնասէ ըսած ժամանակնիս ուրիշ բան չպիտի հասկնանք, բայց եթէ օդին բաղադրութիւնը կամ անոր տարերց մէջ զանազան փոխնները և կազեր գտնուին. նոյնպէս և անոր խառնուածքը. վերջապէս օդ և գարձեալ օդն է որ մեզ կրնասէ, երբեմն ուղղակի և երբեմն անուղղակի կերպով։

1842 Թուականին Լօնտրայի մէջ մեծ հրդեհ մի պատահած ըլլալով, այն միջոցին քաղքին փողոցներուն գրեթէ մեծ մասը շատ նեղ և շատերն ալ անել (չըգմազ) էին. այս պատճառներուն համար օդին ապականութենէն նոյնպէս և անոր սաստիկ թացութենէն որչափ որ շատ տեսակ հիւանդութիւններ յառաջ էին ալ նէ, բարեբաղդաբար կըսեմ նոյն միջոցին մեծ հրդեհին պատճառաւ գրեթէ փողոցներուն մեծ մասը հրոյ ճարակ եղան. երկրին կառավարութիւնը նոյն միջոցը իրեն բարեպատեհ առիթ համարելով, չնայած ամենայն կարելի եղած միջոցներն ի գործ դնել և վերջապէս յաջողեցաւ. ուստիից ի վեր նեղ և անել փողոցներուն թիւը հետզհետէ պակսելով և քաղքին զանազան թաղերուն մէջ յատուկ յանձնաժողովներ կազմուելան, որոնք փողոցներուն ամեն տեսակ մաքրութիւնը պահելու համար զանազան կանոններ և տուրքեր հաստատեցին, ուր վերջապէս հասարակութեան գաղափարին մէջ նոր ծնունդ մ՚առնելով և օր ըստ օրէ սովորութիւն մ՚ըլլալով իրենց, շատ կազմեր ալ սկսեցին կառավարութեանը պէտքերագրերը մատուցանել։

Բարեբաղդաբար մեկ երկու տարիէ ի վեր փողոցները մաքրելու և ուղղելու ճաշակը մեր քաղաքին մէջ ալ մտաւ, մանաւանդ մեկ քանի թաղերը, ուր բարեխնամ կառավարութիւնը ժողովրդեան այս գովելի ճաշակը արդիւնաւորապէս ընելու համար, ամեն օժանդակութիւն ջըղանալ և ամեն ջանք ի գործ կրնէ այս տեսակ պակասութեանց առաջքն առնելու համար. . . ։

Երէկ կ. Պոլսոյ զանազան թաղերուն լայն, նեղ, անել և խոնաւ փողոցներուն վերայ հետաքրքրութեանց վերայ հաշիւ բռնուեր, այն ժամանակը զանոնք ընթերցողաց առաջ դնելով աւելի շատ և դիւրութեամբ պիտի համոզուէին. թէ և առանց վիճակագրական հաշիւներու դիմելու, պարզ ուշադրութեամբ մը կարող պիտի ըլլամ ցուցնել ձեղ ըստ բաւականին այնել և խոնաւ փողոցներուն մէջ բնակող ընտանեաց վիճակը. օդաւոր, լայն և մաքուր փողոցներուն մէջ բնակողներուն վիճակին հետ բազդատելով. մեկը առյգ, կարմրագոյն և ուժեղ, միւսը նիհար, դունաթափ և թուլամորթ։

Յայտնի է որ քաղաքին մէջ գտնուղ արհեստաւորներն, գործաւորներն բոլոր օրը իրենց գործերնուն պատճառաւ առաւօտէ մինչև երեկոյ շուկայի և անոր նման տեղերու մէջ կանցընեն։

Շուկայի մէջ ըսելով չըհասկնանք որ ամեն օր հոն երթալը գէշ է. հապա անոր շատ կազմերուն ձևէն և զանազան պարագայներու նկատմամբ օրը չփոխելուն անշուշտ հոն գտնուղ մարդիկ նա մանաւանդ խանութպանները, որոնք օրը ամբողջ առտը ժամու

չափ շարունակ հոն պիտի անցնեն, ան-
շուշտ յայտնի է որ քիչ շատ իրենց կազ-
մուածքը կվնասի: Ու յիրաւի որքան
որ շուկային ամեն կողմերն յարմար դիր-
քեր ունենար կրկին և դարձեալ հոն
օդը այնքան մաքուր և ջուր չպիտի կա-
րենար մնալ, որովհետև հազարաւոր
լնուլի մարդոց գոնուած սահմանափակ
տեղի մը օդը կարելի է որ ուզածնուս
պէս մաքուր ջուր և շարունակ փոփո-
խական ըլլար, անշուշտ ոչ: Ասոր խօս-
քը և միտքը շուկայի և անոր նման
տեղերու վերայ խօսել չըլլալուն, ու-
րիշ յօդուածի մը կթողունք, բայց այս
գիտողութիւնը յառաջ բերելնիս սա
հասկնալու համար որ շուկայի և անոր
նման տեղերու վերայ այնքան խօսելու
իրաւունք չունինք. և կարելիութիւն
ալ չկայ, որովհետև այն է գոնուածը
և հետևաբար կամայ ակամայ ստիպ-
ուած ենք երթալ. բայց կարծեմ այն-
քան իրաւունք և պատճառ չպիտի
գտնենք այնպիսի նեղ, անել և խոնաւ
փողոցներու մէջ բնակիլ: Սա կէսը ա-
ռաջել դարմանալն և ցաւալի կերևայ
ինձ և ահա առաջել այս կէտին հա-
մար շուկայի վրայ մէկ քանի խօսքերն
ընել ստիպուեցայ թէ այնպիսի սահ-
մանի մէջ առաւօտէ մինչև երեկոյ հոն
անցընելէ ետքը միանգամայն և նոյն
անցինքը բոլոր գիշեր նեղ, անել և խո-
նաւ փողոցներու մէջ բնակելոյին աշ-
խարհիս մէջ ինչ հանգստութիւն ու-
նեցած կրնան համարուիլ. որով թէ ի-
րենց և թէ զաւակացը շատ վնասա-
կար հետևութեանց և անթիւ հիւան-
դութեանց աղբիւր մը բացած պիտի
ըլլան . . . . : Ու ինչ է այս տեսակ
փողոցներու մէջ ժամանակ և կեանք
անցընող անձանց վնասակը և ինչ կրնայ
ըլլալ. ահա այս պիտի ըլլայ մեր խնդրոյն
նպատակը, Թողլով ուրիշ անգամի ա-
նոնց դէմն առնելու միջոցներուն և
պէտք եղած զգուշութիւններուն վե-
րայ խօսելը:

Կերը ըսինք թէ մէկ կողմանէ ի-
րաւունք ունինք շուկայի և անոր նը-
ման տեղերն ժամանակ անցընել որքան
որ ալ զմեզ կվնասեն. բայց ինչ է պատ-
ճառը և ինչ կրաւ ամբ այնպիսի նեղ,
անել և խոնաւ փողոցներու մէջ մեր
մտախաղ զաւկներուն բնակել. փողոց-
ներ՝ որ կարծես թէ Նախախնամու-
թեան մեզ շնորհած այն առողջարար
և ամենահարկաւոր պարգևը, Աբե-
գական այն կենսատու ճառագայթնե-
րուն և ոչ մեկը չմտախնդելու համար
այնպիսի դիրքեր տուած են, ուր կար-
ծես թէ տարեայն չորս եղանակաց ա-
մենահարկաւոր փոփոխութիւնը չկայ.
որովհետև տարեայն 360 օրերուն մէջ
մի և նոյն տաքութիւն և պաղութիւն
կտեսնուի, և ամենէն աղէկ ձմեռուան
եղանակն իր զօրութեամբը կտիրէ:
Փոխանակ գարնան մաքուր օդերուն և
անուշահոտութեան, շարունակ գար-
շելի հոտ մը կայ, որ խոնաւութեան
հետևանքն է, և արդեօք ինչ տարտա-
փելի և ցաւալի հիւանդութեանց ա-
ղբիւր չտար, որուն, այսինքն խոնաւու-
թեան վերայ ժամանակիս լաւ պիտի
համոզուին ընթերցողք և հետևաբար
պիտի հասկնան և տեղեկանան անկէց
յառաջ եկած վտանգները:

Շնչառութեան վերայ խօսած ժա-
մանակնիս հասկցուցինք որ մարդս ա-
ռանց մէկ քանի օր կերակուր առնելու
կրնայ ապրիլ, բայց առանց շնչելու և
ոչ մէկ վայրկեան մը ապրելու կարողու-
թիւն ունի: Այնպէս ինչպէս որ փա-
փուկ ստամոքսի մը դժուարամարս որ
և իսկ կերակուր մը կվնասէ. առաջել
եւս վտանգաւոր է մարդուս ապա-
կանեալ օդ շնչելը, ոչ թէ միայն օդը
իր անմաքրութեամբը կվնասէ, այլ
նաեւ մարդուս կազմուածքին այնքան
փափուկ անդամներուն այսինքն թո-
քերուն մէջ մտնելուն:

Խօսքերնիս ինչ յարաբերութիւն
կրնայ ունենալ նեղ, անել և խոնաւ

փողոցներուն հետ : Մեծ և մեծ յարա-
բերութիւն ունի , որովհետև փողոց-
ներուն նեղութեան և անելութեանը
պատճառաւ օդի անդադար փոխոխու-
թիւնն անկարելի է . անկարելի է նոյն
պէս անոնց մէջ արեգակին առօջքարար
ճառագայթները թափանցել . որոնք ,
այսինքն այս գլխաւոր երկու պակասու-
թիւններն , իրենց վատնգաւոր հետե-
ւութիւնները կրկրկնապատկեն մանա-
ւանդ ձմեռուան եղանակին մէջ , ուր
ի բնէ ոչ այնչափ արեգակի ճառագայթ
և հետեւաբար ոչ այնքան տաքու-
թիւն կունենանք , որոնք պատճառ են
նաև օդին փոխոխութեանը :

Այդպուս մարմինը ինչպէս ուրիշ
տեսակ անհամար մարմիններ , տարբեր
չարս եղանակներուն հետ փոխոխու-
թեան մէջ կմտնեն . ամառ ատեն այս-
ինքն տաքութեամբ կթուլանայ , և
ձմեռ ատեն կխտանայ . բայց այս փո-
փոխութեանց և ոչ մէկը վնասակար է
վասն զի բնական են և մարմինն ալ ըս-
կիզբէն սովորած է . որոնց պակասու-
թիւնն ալ նաև կվնասէ . կհետեւի որ
այս փոխոխութիւնները ամենայն կեր-
պիւ պէտք են . բայց ամենուն ալ ի-
րենց սահմանին համեմատ , անցիր
սահմանը քիչ մը շատ կամ քիչ մը պա-
կաս , անպատճառ պիտի յաջորդէ գե-
շութիւնը : Ասոր այս պէտքերը ստ-
ուգելով և հասկնալով նոյնպէս անոնց
սահմանը , ինչ պիտի ըսեմք շարունակ
այնպիսի մուտք , նեղ , և խոնաւ փո-
ղոցներուն մէջ բնակողներուն համար :

Այս տեսակ թշուառ փողոցներուն
մէջ շատ տեսակ և ցաւալի հիւանդու-
թիւններ կտիրեն , բայց կան անանկ հի-
ւանդութիւններ , որոնց պատճառը
այս կէտը ըլլալուն այնքան զգալի չեն ,
և զանազան նկատմամբ . որովհետև ա-
նոնցմէ շատերն ժամանակաւոր , այսինքն
այն հիւանդութիւնները կանոնաւոր
շարունակութիւն մը չունին կամ թէ
ատեն ատեն երևան կելլեն . բայց շա-
տերն ալ միևչեւ յաւիտեան կտիրեն
ինչպէս ասկրի հիւանդութիւն , խոյլք
պարանոցի , գլխաւ ցաւ , զանազան ա-
չացաւներ , ակռայի ցաւ և այլն :

Այս տեսակ վտանգաւոր գեշու-
թեան պատճառաւ ծնունդ առած հի-
ւանդութեանց մէջ շատերն դժբաղ-
դաբար ժառանգական են , այսինքն
տեսակ մը հիւանդութիւններ , որոնք
հետզհետէ որդւոց յորդի կազդեն և
կանհետանան միևչև որ նոյն հիւան-
դութեան գերի եղող թշուառ ըն-
տանեաց յետին անհատը ոչնչանայ : Ի-
սածս ամենուն բոլորովին հասկնալի և
աւելի զգալի ընելու համար չմոռնամ
յիշել նաեւ որ այն ժառանգական հի-
ւանդութեանց մէջ են նա մանաւանդ
խոյլք պարանոցի (սքրոֆա) և թոքախ-
տը (վէրէմ) , որոնք ամեն օր անթիւ-
ներու կենաց թելը կկտրեն և կարծես
թէ սխտակալութիւն մ' առնելու հա-
մար սերմերնիր կցանեն :

Յիրաւի որքան որ տաերեւոյթս
այնքան մեծ կերևնար ալ նէ այնպիսի
կոզմերը բնակողաց , այնքան մեծ և
ծանր են հետեւութիւնները . հետեւ-
ութիւններ՝ որոնք ոչ թէ միայն մար-
դուս ֆիզիկական կենաց վնասակար
են , հապա նաև անոր բարոյականին ,
վերջապէս ամենայն կերպով վնաս կը-
հասցնեն մեզի , որոնց անուններն չի-
շելը աւելորդ կսեպեմ . ուստի այս ան-
գամ այսքանը բաւական համարելով ,
կվերջացնեմ խօսքս և կխօստանամ ու-
րիշ անգամ այս կէտին վերայ գալ . և
զոր կարելի եղածին չափ ընդարձակե-
լու և շատ անգամ յառաջ բերելու դի-
տաւորութիւն ունիմ , որովհետև այս
պակասութիւնը ծանր և ցաւալի հի-
ւանդութեանց պատճառ կըլլան միշտ ,
և զորոնք անհետացնելու համար բա-
ւական է որ հասարակութիւնը լուսա-
ւոր դատողութիւն մը , իւր օգտին
ճանաչումը և յարատև կամք մը ու-
նենայ : —

ՕԳ.

Արդուս ընչած օդը ոչ այնչափ տաք և ոչ ալ այնքան պաղ ըլլալու է, ոչ այնքան խոնաւ և ոչ այնչափ չոր։

Հարբուխի (Նէվրալիլ) առաջին պատճառ կրնամք տալ օդին խոնաւութիւնը։

Եկեղեցիներու, Թատրոններու, ըղբօսարաններու, տուներու, կրպակներու և այլն առանց նման շինուածոց վրայ մեծ զգուշութիւն պէտք է ունենալ. (նայնպէս փողոցներուն լայնութիւնը մեծ օգուտ ունի անոնց մէջ շրջան ըրած օդին մաքրութիւնը և զովութիւնը պահուելու համար)։ Այսր համար Ընդհանուց պատմութիւնը շատ գեղեցիկ օրինակներ կպարունակէ։ Ինչպէս որ անոնցմէ մէկը "փողոց" վերնագրով յօդուածնուս մէջ դրած ենինք։

Ասոնց որ առաջները փողոցները շատ նեղ ըլլալուն հետեւաբար արեգակին ճառագայթները չկարենալով թափանցել, կարգէ դուրս խոնաւութիւն կը տիրէր. նոյնպէս օդն ալ միշտ դադար վիճակի մէջ ճնշելով հան բնակող մարդիկն ալ բնականաբար միշտ ապականեալ և խոնաւ օդ շնչել ստիպեալ ըլլալով զանազան ցաւալի հիւանդութիւններով ենթակայ կըլլային, մինչև որ 1842 Թուականին մեծ հրդեհ մի պատահելով, կառավարութեան կողմանէ բոլոր այն նեղ և անել փողոցները լայնցնելու խնամք տարուելով շատ տեսակ դէշութեանց դէմն առնուեցաւ և հիւանդութեանց շատերն ալ բոլորովին ոչնչացնելու կարող եղան։

Այսր նման շատ կողմեր, բաժնիս ապացուցանելու համար անթիւ օրինակներ ունիմք։

Տան մը և սրբիչ շինելու օդին մաքրութիւնը պահելու համար զանազան զգուշութիւններ կան թէ շինուածքի կողմանէ և թէ քաղքին կամ գիւղին որ կողմը շինուելու մասին. ու բայհետև ամեն տուն հովասուր չկրնար ըլլալ, հետեւապէս ամեն սրբիչ տուն չնելու յարմար չհգալ. հետուս կենալու է միշտ լերանց կիրճերէն, ձորերէն և կամ ցած տեղութենէ, ոչ թէ միայն անանկ տեղէր օդ չբանելուն, այլ նաև թաց ու խոնաւ ըլլալուն համար, այժմ մէկ դի թողուած այս խնդիրները, միայն մեր գանուած վիճակին կամ մեր բնակած տուներուն վերայ։

Ասօքերնիս Ա. Պօլսոյ վերայ է, որ նեղ, խոնաւ և անել փողոցներուն դըժբեթէ ամենքն ալ դժբաղդաբար մեր հայ եղբարքը կբնակին, երեսի վերայ ձգելով անուշ . . . . և որոնց այն կողմերը ձգելնին և սրբիչ կողմերը երթալ բնակելնուն առաջարկութիւնը մեր նպատակէն բոլորովին հետու բան մ'ըլլալուն համար, կզանամ գոնէ իրենց այնպիսի վատառողջ տուներու մէջ բնակելէն յառաջ եկած դէշութիւնները յայտնել և հետևապէս նոյն դէշութեանց առաջքն առնելու միջոցներն ըստ մեր կարի ցուցնել։

Նախ ամենայն կերպով ջանալու են այնպիսի վատառողջ տեղեր բնակողները միշտ մաքրութեան մէջ ապրիլ, որն որ ոչ թէ միայն տուներու վերայ կայանալու է, այլ նաև մարդուս հետ յարաբերութիւն ունեցող բոլոր նիւթերը այսինքն տանը կահ կարասիքը, ամանները և այլն, նոյնպէս կարելի եղածին չափ աշխատելու օգը ապականող շոգիներու, տեսակ տեսակ մուխերու և գարշահոտութեանց պատճառ ըլալ. պէտք չէ ամենևին տուներու մէջ ըօշ-ըօշ դիլել կամ պահել, որոնք օգը ապականող պատճառաց գըլխաւորն կրնան համարուիլ։ Կերակուրի և պահելու կողմանէ պէտք եղած զգուշութիւնները անհրաժեշտ են. Թուլայուզիչ կերակուրներէն հեռու կենալու է նաև մոռնալու չէ մեկ անգամին չափազանց ստամոքսը լեցնել աւելի թրջութիւն կպատճառէ. այնպէս տեղւոյնք օգը իբենէ ապակա-

նեալ ըլլալուն, և գրեթէ միշտ գաղտ վիճակի մէջ գտնուելուն զայն ապականելու պատճառները չաւելցնելու համար. և ոչ մէկ տեսակ անասուն մի պահելու չէ, որոնք որչափ որ մաքուր պահուին, անկարելի է որ զանազան գարշահոտութիւնները կպատճառեն. վերջապէս տանը ամէն մէկ կողմերը մաքուր պահելու համար ամէն կարելի եղած միջոցներն ի գործ դնելու են. շատ ընտանիքներ իրենց թէ մաքրութիւն կսիրեն. գրեթէ ամէն օր տախտակամածները սրբելու կելնեն, որով թացութիւնը կրկնապատկելու մեծ առիթ կստան, և անկէց ծագելիք հիւանդութեանց իրենց թէ հրաւէր կկարգան, վանորայ այս վատառողջ սովորութեան դէմն առնելու համար ջանալու է հանապազ մաքրութեան մէջ ապրիլ. որովհետեւ այս տեսակ տուներու մէջ գտնուող ընտանիքները տանը պղտիկութեան պատճառաւ նրբոտելու ուտելու և պառկելու սենեակ նին մէկ է. և շատ անգամ մէկ քանի գործողութիւնները մի և նոյն սենեակի մէջ պիտի կատարուին. և երբեմն խնայողութեան համար սենեակը տաքցնող վառարանը ընտանեաց կերակուրն ալ պատրաստելու պիտի ծառայէ, ալ երեւակայէ թէ ինչ տեսակ գարշելի և ապականեալ օդ մը պիտի տիրէ ատանկ սենեակի մը մէջ և ինչ չար հետեւութիւններ տեղի չեն ունենար հոն. ուստի օդին այս անտեղութեանց առաջքն առնելու համար պէտք է որ թէ ամառ ըլլայ, թէ ձմեռ կարելի եղածին չափ սենեակին պատուհանները յաճախ բանալ գոցել որպէս զի օդը փոխուի և ապականութիւնը դուրս ցնդի։

Ատանկ ալ վտքրիկ սենեակի մը մէջ ամբողջ ընտանիք մը պառկած ժամանակը անշուշտ սենեակին օդը կարգէ դուրս կապականի և այն ատեհճան որ երբեմն մինչեւ հիւանդ կելլեն առաւօտուն, ոմանք սաստիկ թլսութիւն կզգան և ոմանք ալ գլխու ցաւ կունենան ևայլն։ Ահա այս տեսակ փողոց-ներու մէջ յաճախ կտեսնուի սըպիտ և սըրաճա ըսուած այն երկու սարսափելի հիւանդութիւնները. այս պատճառաւ է ահա որ մաքրութիւնը աղքատ ընտանեաց մէջ առաւել զօրութեամբ տիրելու է, մանաւանդ այս տեսակ տուներու մէջ. վասն զի միայն անով կարող պիտի ըլլան այնպիսիները կարծես թէ ի բնէ պատրաստեալ հիւանդութեանց դէմն առնելու, եթէ այս կէտին ուշադրութիւն չըլլայ, ծնունդ առած և առնելիք գեշութիւնները ոչ սահման և ոչ դարման կունենան. մէկ խօսքով թշուառութիւնը ամէն կողմը կտարածէ իր ահաւոր հետեւութիւնները։

Ասոր այս տեսակ վտքրիկ սենեակներու մէջ պառկողներն առաւօտուն անկողնէն ելածնուն պէս պէտք է պատուհանները բանալ. սենեակը ամեհայն կերպով մաքրել. հոն պառկողներուն առաջին գործն ըլլալու է լուացուիլ. իրաւ է որ գիւղերու մէջ ալ այս սովորութիւնը կայ, թէ փոքրիկ խրճիթի մը մէջ երբեմն տունէն աւելի մարդ կպատահին, արնոր վտանգաւոր է, բայց ոչ այնքան. որովհետեւ գիւղացիք լուսնալուն պէս ամէնն ալ դաշտերը կտարածուին, ուր մինչեւ երեկոյ գով, մաքուր և առողջ ծուխ կշնչեն, բայց առաջիններն ինչ կընեն. — առաւօտէ մինչեւ երեկոյ շուկայի կամ անոր նման վաճառողաց տեղւանքը ժամանակ անցնելէն ետքը, կարծես թէ իրենց առողջութիւնը անփոփոխ մնալու համար գիւղացւոց դաշտը փոխելնուն նման կամ ուղղակի տուն երթալն կամ թէ զբօսնայու մը ուր տեղ ալ ապականեալ օդ մը ծծելէն ետքը, շատերն ալ ընդհանրապէս գինովցած անանկ տուն կվերադառնան։

